

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ Ն № 253.



ՇԱՐՈՒՆԱՎԱՊՈՒՄԷ

„ՄՇԱԿ“

ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱՎԱՊԱՍԱՆԸ:

Օտարաբաղադրանքներ պէտք է դիմեն հետևել հասցեով՝ Тифлисъ. Редакция «Мшакъ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Կենդանի գործ. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գասպար Եղորտեան. Մատենադարանի խմբագրութիւն. Նամակներ Մոսկովայից. Նամակ Պետերբուրգից. Նամակ Շուշուց. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խաղաղութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. — ԽԱՍԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳՐՈՒՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պաշտօնական տեղեկագիր. Նամակ Թիւրքիայից.

ԿԵՆՏԱՆԻ ԳՈՐԾ

Մենք մի յօդուածում, որ տպագրված էր «Մշակ» 37-րդ համարում, ցոյց տըւինք, որ կղերականութիւնը վերին աստիճանի փաստարար գործ է կատարում, կրօնական-դաւանաբանական վէճեր յարուցանելով այնպիսի մի ազդի մէջ, որ բաղկացած է զանազան դաւանութիւնների պատկանող տարրերից: Մի աւելորդ անգամ էլ կրկնեցինք մենք, որ այժմեան ժամանակ կղերականութիւնը պիտի հրաժարվի միջնադարեան այն տեսլականից, որ չէր ճանաչում ազգի, ընդհանրութեան շահ, այլ զիտէր միմիայն կրօնի, եկեղեցու շահը: Այս անգամ մենք կանգ կառնենք մի փաստի վրա:

Վերջնայի Միջնադարեան միջնադարեան այս տարի հրատարակեց մի վերին աստիճանի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ

(«Martyrologe armenien»)

Պարբերական ֆրանսիական «L'oeuvre d'Orient» կաթոլիկ միաբանութեան ընդհանուր վերատեսուչ հայ Դարմառանի հրատարակութեամբ լոյս է տեսել այս օրերս, ֆրանսերէն լեզուով, Հայաստանի կոտորածների մասին այն պաշտօնական տեղեկագիրը, որը կազմել են Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի ղեկավարները և Պոլսում և ներկայացրել սուլթանին: Գրքի վերնագիրն է՝ «Martyrologe armenien»:

Այս ամս հաւաքական յիշատակագիրը, որով մենք պետութիւնների ղեկավարները դիմել են Բ. Գրան.

«Մենք պետութիւնների ղեկավարները հարկաւոր են համարում առաջագրել մի պատկեր, որը ամփոփում է Անատոլիայում պատճառ դէպքերի մասին ունեցած տեղեկութիւնները: Այդ տեղեկութիւնները, որոնք ստուգված են հնարաւորութեան սահմաններում, բոլորում են եւրոպական

ճանի հետաքրքրական գիրք, որը մանրամասն նկարագրում է Տրանսիլիանիայի Կերլա հայկական քաղաքը: Ունգարիայի մի անկիւնն ընկած այդ հայ կոյունիան ունեցել է մի լաւ անցեալ. պահպանելով իր ազգութիւնը, նա մասնակցել է երկրի կուլտուրական առաջադիմութեան, մրցել է ունգարական ազգայնութեան դէմ, որ ճնշւած է կրանել բոլոր մանր ազգութիւնները: Այդ մրցութիւնը նա աջողութեամբ տարել է երկու դար և էլ աւել ժամանակ: Սակայն մրցութիւնը եղել է անհաւասար ոյժով: Ունգարական ազգութիւնը, անդադար կատարելագործելով իր լեզուն, գրականութիւնը, իր ցեղական ինքնութիւնը դարձնելով իր կուլտուրական և պետական կեանքի նշանաբան, հեշտութեամբ յաղթահարեց մի փոքրիկ համայնք, որ քարացած էր իր եկեղեցական ծիսակատարութիւնների ինքնուրոյնութեան շրջանում, որ հետզհետէ մոռանում էր իր մայրենի լեզուն, մեռնում էր նրան, մեռնելով դրա հետ իր մտաւոր ասեղծագործութեան շնորհքը, ոչնչացնելով այն գէնքը, որով պիտի պաշտպանվէր և կանոնի առաջ բերած միջոցներին դիմադրէր մի խաղաղ ինքնաճանաչութեան և ինքնազարգացման պայքարի մէջ: Այդ դրութեան հետեւանքն այն եղաւ, որ Կերլայի հայերը այժմ ներկայացնում են կիսով չափ մաքուր և մաքուր տարր: Վերջնայի Միջնադարեանները մեզ հաւատացնում են միայն ինքնազարգացում, որ հայ բաղամարդ գործնական այսուհետեւ և մի դար էլ չը պիտի կարողանայ դիմանալ այլ պիտի վերջնականապէս լուծվի, ոչնչանալ և անհետանալ իր լեզուն, իր ցեղական ինքնութեան միայն աւանդութիւններ, միայն եկեղեցիներ և շինութիւններ:

Կատարելապէս հաւատում ենք Միջնադարեանների այդ գուշակութեան: Բայց չենք հաւատում նրանց այն մտքին, թէ փրկութեան միակ միջոցն է նորից հաստատել հայածէս կաթոլիկ եպիսկոպոսութիւնը:

Եթէ մի ժողովուրդ կորցրել է իր մայրենի լեզուն, եթէ նա ոչ մի հոգեկան կապ չունի ընդհանուր ազգի շահերի, կուլտուրական և ազգայնական ձգտումների հետ, եթէ նա իբրեւ այդ ազգի մի մաս, կորված է իրական հոգի, կախված է օրի մէջ, չէ

ճանաչում ոչ անցեալ, ոչ ապագայ, ոյժ և կարողութիւն չունի զարգացնել իր ինքնուրոյնութիւնը, — այդպիսի ժողովուրդը կորած է: Նա կարող է ունենալ անկախ, ինքնուրոյն եկեղեցի, բայց շատ և հեշտ կարող է ոչնչացնել և այդ հիմնարկութիւնը, եթէ չունենայ լեզու նրան հասկանալու, չունենայ մի այնպիսի որոշ միտաւոր միջնադար, ուր եկեղեցական ինքնութիւնը կարող էր անկախ կապված լինի միւս հոգեկան ձգտումների, իրեպիսի ինքնուրոյնութեան հետ: Քարերը, ծէսը, աւանդութիւնը միշտ ցուրտ, անկենդան կը մնան, եթէ նրանց շուրջը դիտակցական շարժումը վաղուց դադարած լինի:

Որքիչ քան կը լինէր, եթէ Միջնադարեան հայերը չը բաւականանային ողբալով, չը բաւականանային երազելով, որ հայածէս եպիսկոպոսութիւնը կիջնի երկնքից, ինչպէս Մեսիա, այլ գործէին խելացի եռանդով, մտցնէին հայ քաղաքի մէջ մոռացված մայրենի լեզուն, հիմնէին դպրոցներ, գրքեր հրատարակէին, գրքեր ոչ թէ կրօնական-դաւանաբանական բովանդակութեամբ, այլ աշխարհական գիտութեան վերաբերելով: Հարկաւոր է մի գործունէութիւն, որ գիտակցութեան, ինքնաճանաչութեան միջոցն էր, որ տայ հասկացողութիւն ոչ թէ այն մասին, թէ ժողովուրդը մի ողորմելի կրօնական համայնք է, այլ այն մասին թէ նա կուլտուրական անկախութեան ձգտող, ինքնուրոյնութեան մէջ զարգացող մի հաւաքական բարդ մարմին է, որ ունի իր հաստատ արմատը, իր դոյութեան իրաւունքը, որի իւրաքանչիւր անդամ պիտի գործէ, պիտի առաջադիմէ: Այն ժամանակ նա կարող էր դուրս հրաւիրել իր մտաւոր կարողութիւնները և ունգարական ազգի դէմ մրցել, ունենալով իր ոտների տակ հաստատ հող: Եթէ ունգարական լեզուով հրատարակվող «Որմէնի» ամսագիրը այնքան մեծ գործ է կատարում Վերջա ջաղաքի հայերի մէջ, որ ունգարացիները ատում են նրան, ապա ինչեք կարող էր անել հայերէն լրագրութիւնը, հայերէն գրականութիւնը, եթէ միայն կարողանար հաստատվել այնտեղ:

Ահա գործունէութեան ասպարէզը: Հայ կաթոլիկ հոգեւորականութիւնը մամուլի, գրականութեան, ուսուցման միակ արտո-

նատէրն է հայ կաթոլիկ համայնքի մէջ: Բայց ի՞նչ է անում: Նա էլ դեռ այն մանրութեան մէջ է, որ ազգութիւնը կարելի է պահպանել միմիայն եկեղեցով: Կերլայի պէս բաղամարդ զաղթականութիւններ անհետացել են և այսուհետեւ էլ կանհետանան, քանի որ կղերականութիւնը չի հասկանալ իր սխալը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՍՊԱՐ ԵԱՂՈՒԲԵԱՆ

Ապրիլի 30-ին Պետերբուրգում վախճանվեց, երկտասարդ հասակում, երկաթուղային գործերի ղեկավարամենտի փոխ-ղեկավար և հայ հասարակութեան ծանօթ Գասպար Եաղուբեան:

Հանգուցեալը ծնվել է Բաղվում, ուր և ստացաւ իր նախնական կրթութիւնը ընդլայնակ դպրոցում: Յետոյ անցնելով լեւոնային ինտիտուտ, այդտեղ աւարտեց իր ուսումը և մտաւ պետական ծառայութեան մէջ, որտեղ շատ կարճ միջոցում նա մեծ առաջադիմութիւն արեց և ստացաւ այն կարեւոր պաշտօնը, որի մէջ վրա հասաւ վաղաժամ մահը:

Գասպար Եաղուբեանը թէ՛ ուսանող ժամանակ և թէ՛ յետոյ դասավանդել էր հայոց գրականութեամբ: Նա երկար տարիներ «Մշակի» աշխատակից էր, և զետեղել է բաղամարդ թղթակցութիւններ «Մշակի» մէջ: Տառնակալ յօդուածներով մասնակցել էր կանցնող նրա մի շարք գրութեանը՝ սակաւքերի կամ տարիքների մասին, իսկ վերական աշխատութիւններից «Մշակ» հրատարակեց անտնով գրութեամբ, որ տպվեց «Մշակի» մէջ 1887—88 թվին «Միլիան» ստորագրութեամբ: Նա զետեղեց երկու յօդուած «Արաբ» հանդէսի առաջին համարի մէջ: Բացի դրանից ժամանակ առ ժամանակ նա գրում էր յօդուածներ ուսաց լրագիրներում, ինչպէս, օրինակ, եօթնամասուն թուականների վերջերին «Голосъ» լրագրի մէջ:

Իր մասնագիտութեան մէջ Եաղուբեան իր վրա դարձրեց անսխալ անհատական ուսուցչական կրթութիւնը իր հետազոտութիւններով երկաթուղային տարիքների վերաբերութեամբ և ճանաչվեց իբրեւ լուրջ աշխատող: Իսկ երբ միջնադարեան յիշատակում հերթական ինչպիսի դարձաւ տարիքների վերաբերութիւնը և համակարգութիւնը, Եա-

աղբերներից, կամ քաղված են հիւպատոսական ղեկուցումներից: Նրանք սահմանափակվում են այն տեղերով, ուր ղեկավարները կարողացել են ձեռք բերել միանշանակ արժանազատ տեղեկութիւններ և չեն ըլլում միանշանակ աղբերներից: Մենք պետութիւնների ներկայացուցիչները պարտաւորութիւն են համարում այս աշխատութեան մի օրինակը դնել Բ. Գրան տըրմադրութեան ներքոյ:

(Ստորագրութիւն վեց ղեկավարների)

Պէրա, 4 փետր. 1896

Այս հաւաքական յայտագրին կցված է Տրանսիլիանի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Մամուրէթ-է-Ազիզի, Գիարբէքի, Սիվասի, Հալէպի, Ալանայի, Անգորիայի և Եւփրատի վերջիններում տեղի ունեցած կոտորածների, դէպքերի, աւարաւորութիւնների և խուլովութիւնների տեղեկագիրը: Ամեն մի վերջին մասին հետեւել տեղեկութիւններն են առաջ բերված՝ 5 սիւնակի մէջ. — 1) տեղը, 2) ժամանակը, 3) սպանվածների թիւը, 4) դէպքերի պատմութիւնը և նրանց պատճառները, 5) տեղական իշխանութիւնների և ազգաբնակչութեան վարմունքն ու բռնած դիրքը:

Այդ պաշտօնական ղեկուցումը ուղարկելով լուրջ Սոյսերիին, Կ. Պոլսի անդլական ղեկավարը Ֆիլիպ Կըրբին հետեւալն է գրում.

«Մի օրը. ես պատիւ ունեմ ներկայացնել ձեզ փոքր-Ասիայում նորերս տեղի ունեցած խառնակութիւնների նկարագիրը, որը պատճառվել է վեց ղեկավարների կողմից նշանակված պատգամաւորների մի յանձնաժողովի ձեռքով: Այդ տեղեկագիրը կազմութեան նպատակն է մի ճշգրիտ պատկեր ներկայացնել կոտորածներից առաջ տեղի ունեցած դէպքերի, ամեն մի քաղաքում եղած խառնակութիւնների, սպանութիւնների և կողոպուտների մասին, որքան կարելի էր ստուգել մանրամասնութիւնները, ինչպէս և տեղական իշխանութիւնների բռնած դիրքի մասին:

Տեղեկագիրը գլխաւորապէս հիմնված է այն ղեկուցագրերի վրա, որ հիւպատոսները ներկայացրել են իրանց ղեկավարներին: Սակայն տեղեկութիւնների մի մասը, որը վերաբերում է Սիվասի, Խարբէքի, Ալանայի, Գիարբէքի և Հալէպի վերջիններին, թէև հայկալիք են կաթոլիկ և բողոքական քահանաները, երկրի ոչ-բնիկները, բայց նրանց վկայութիւնն ընդունված է միայն այն ժամանակ, եթէ նրանք աւանաւորապէս վկայներ են եղել և եթէ նրանց տեղեկութիւնները համապատասխանել են պաշտօնական ղեկուցագրերի բովանդակութեան:

Չհեղինակելով ընդունվել է միայն այն դէպքերում, երբ տեղեկութիւնների հիման վրա կա-

րելի էր մի ճիշդ գնահատութիւն անել և մի ճիշդ թիւ որոշել: Դառ անգամ անկարելի է եղել, մանաւանդ այն դեպքերի վերաբերմամբ, որոնց վիճակի մասին չեն կարողացել ոչ մի բան իմանալ, որ և է տեղեկութիւն ձեռք բերել և միայն հաստատվել է, որ այդ աւելորդ զիւղերը գտնվում են այս ինչ նախագում: Այդ պատճառով տեղեկագիր մէջ ոչ մի խօսք չը կայ Վանի, Խարբէքի, Գիարբէքի շրջանների վերաբերում կատարված սպանութիւնների մասին: Ամբողջ կորուստը, որի մասին կարելի է եղած ճիշդ տեղեկութիւն ունենալ, հասնում է մօտ 25,000-ի, և եթէ դրա վրա աւելացնենք այն կոտորածները, որոնք մասին պակասում են մանրամասնութիւնները, այդ գումարը կարող է մի շատ մեծ թվանշանի հասնել:

Ֆիլիպ Կըրբի

Հայր Դարմառան, չը բաւականանալով այդ պաշտօնական տեղեկագրով, ղեկուցել է գրքի մէջ, որը նա կոչում է «Հայկական մարտիրոսագրութիւն» և մի երկրորդ տեղեկագիր հետեւեալ վերնագրով. «Համառօտ վիճակագրութիւն Հայաստանի վերջին խուլութիւնների ժամանակ տասն և մէկ վերջին խուլութիւն կատարված եկեղեցիների սրբապղծութեան, քահանաների կոտորածի, շուքի հաւատաւորութեան, կանանց և կոյսերի առնանդման, կաղնված անյանտես վկաների ղեկու-

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ

Ապրիլի 28-ին

Երեկվայ սրբնթաց գնացքով Պետերբուրգ հասա Երեմիա արքեպիսկոպոսը Մետրոպոլիտան Կարապետի հետ, որին ընդառաջ էին եկել Արխիմանդիտ արքեպիսկոպոսը, այստեղ եղող երկու վարդապետները և բազմաթիվ հայեր։ Սրբազանն իջավ Արխիմանդիտ արքեպիսկոպոսի պատրաստած ընակարանում։ Սրբազանը կիրակի օրը ներկայեցրեց և պատարագին և ապա մի քանի այցելություններ տուեց բարձրաստիճան անձանց, ընդունելով փոխադարձ այցելություն։

Պետերբուրգը, թե՛ թագադրություն ատելով և թե՛ իրար յաջորդող կայսերական տոների պատճառով՝ սոսնակալ կերպարանք է ստացել։ մի հանդիսին յաջորդում է միւսը։ Նեպոկի պրոսպեկտի վրա անդադար դեպի երկաթուղու կայարանն են ուղղվում այն զորքի քնդերը, որոնց վերձայնված է ներկայ լինել թագադրությունը։ Ժողովրդի խոսակցությունն նրվել, լրագրությունը զբաղեցնող միայն և միմիայն թագադրությունը և այն արտակարգ պատրաստություն ու հանդիսակատարություն է, որի համար մեծ աշխատանք, մեծամեծ ջանքեր են լինում։ Քիչ չեն խօսում նաև այն արտասովոր թանգույթի մասին, որը սկսել է զգալի դառնալ նոյն իսկ Պետերբուրգում, ուր հիւրանոցների քնդերը համարեա ըստապատկվել են, իսկ ինչ որ Մոսկովայի մասին են պատմում՝ արդեն առասպելական կերպարանք ունի։ Մի պատուհանը 300-ից մինչև 500 բուրլիով է վարձով տրվում, բալկոնը՝ 1500 բուրլիով։ Կառքերի, կերակրեղենների և անհրաժեշտ պիտույքների քնդերը միանգամայն անմատչելի են։ Երկնքի սկզբը օրեօրե պահանջում է 100 ռ. վարձ, իսկ մարդը ժամանակի համար ոչ պակաս քան 1200 ռ.։ Ետերը պատրաստում են Պետերբուրգից կառքեր վերցնել հեռները։ Լավում է, որ մեր եպիսկոպոսներն էլ նոյն մտադրություն ունեն։

Հայ հոգևորականությունը ներկայացուցիչների համար Մոսկովայի հայոց եկեղեցական խորհուրդը ստան է վարձել 20 օրվայ ժամանակով 500 ռ. վճարով, իսկ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը, թե՛ մի կառավարիչ Գուսկի վարդապետի առաջարկությամբ, որոշել է մի հազար բուրլի ծախս նշանակել։

Այսօր այստեղ կատարվելու է եկեղեցական խորհրդի նոր անդամների ընտրությունը, մի քանի կուսակցություններ պատրաստվում են իրար դեմ մարտադրու։ Ինչպես իմացանք, բոլորը մի բանում միանում են, — աշխատել որ Եղեան, կամ նրա առաջարկած մարդկանցից որ և է մեկը չանցնի։ Արդիւնքը դեռ մեզ յայտնի չէ։

Ֆ,

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Ապրիլի 30-ին

Ահա երկրորդ տարին է, որ Շուշու թեմական զարկը մատնված է Նախագետ վարդապետի նշանակած հոգաբարձուների կամայականություն։ Չը նայելով, որ նոր հոգաբարձուների ընտրություն օրից կէս տարուց աւել է անցել, սակայն նրանք դեռ չեն հաստատվել իրանց պաշտոնում մեզ անհասկանալի պատճառներով։ Ժողովուրդը հիասթափվել է հոգևոր իշխանության այդ տեսակ վարմունքից, ուստի այդ առիթով ոչ մի դիմում չէ արել։ Ուսումնական տարին վերջանում է, քաղաքայի համար մտածող չը կայ, որովհետև օրինաւոր հոգաբարձուները դատարարված են անգործունէություն, իսկ նշանակվածն են ժամանակ չունեն պարապելու այդ տեսակ մանր բաներով, այլ զբաղված են աւելի կենսական հարցով, այն է ստանձնել որ և է ձեռնառու պաշտոն քաղաքային ինքնավարության մէջ։

Այս հանգամանքների վրա աւելացաւ և այն, որ զարկանոցի տեսուչ Նիկիտ Մաշկովի հիւանդանալով՝ ստիպված եղաւ հեռանալ քաղաքից Մոսկովայի բժիշկների օգնություն գիմելու համար։

S—U

ՆԱՄԱԿ ԱՅԻՒԲԱԼԱՔԻՅ

Ապրիլի 29-ին

Հայ թատերասերները միանալով այստեղ ծառայող երիտասարդ վրացիների հետ, մի հայ-

վրացական ներկայացում տուին՝ յօդուտ Գուլամիսի նախագի և Գուրու Գաւառի հեղեղից վնասված աղջարնակություն։ Հասարակությունը համակրություն ցուցաբերեց, և չը նայած որ՝ բացի մասնակցողներից՝ ուրիշ վրացիներ չը կային, իսկ հայերից շատ քչերն էին վրացերէն հասկանում, բայց և այնպէս դաշխիւն չի էր հանդիսականներով։ Մուտք եղաւ՝ տոմսակների վաճառուից—133 ռ. 60 կօպ. և նուէրներ—25 ռ. 70 կօպ.։ Ընդամենը—159 ռ. 30 կ., իսկ ծախս՝ 29 ռ. 52 կ., ուրեմն զուտ արգելքը—129 ռ. 78 կօպ.։

Սկզբից մտադիր էին մաս հանել և մեր գաւառի Բարալէթի դիւղի ժողովրդական ճրի ընթերցարանին, սակայն այժմ մտադիր են ամբողջ արգելքը ուղարկել թիֆլիս՝ «Ժամանակաւոր յանձնաժողովին»։ Թէ՛ հայ և թէ՛ վրացի սիրողների խաղը ընդհանրապէս շատ կենդանի անցաւ։

Ջ. Տ.—Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 6-ին

«Տարադի» ժամանակաւոր-խմբագիր Աւետիք Արաւիսան անցնիւ։

Դուք, պարոն, ստանձնելով «Տարադի» ժամանակաւոր խմբագրությունը, հենց առաջին համարից թող տուեցիք ձեզ՝ մի այնպիսի բայ անել, որ իրան երբեք չը պէտք է թող սայ մի բարեխիղճ գրական գործող։ Դուք վստահանում էք պնդել, որ ես որ և է համակրական նամակ և հեռագիր չեմ ստացել, բացի այն «առանց կենտրի երկու ջուրտ գրություններից», որոնք տպագրված են «Մշակի» մէջ։ Եւ հիմնվելով այդ համարձակ եղբակցություն վրա, ինձ մեղադրում էք կ եղծ ու թե ան մէջ։

Նախ թէ ինչի բացի տպագրված նամակներից չը տպագրեցին ուրիշ անձանց յօդուածները—այդ կարող էք տեղեկանալ ցէղուրական կոմիտէից։ Իսկ եթէ անձամբ ձեզ հետաքրքրական է, կարող եք ձեզ տալ կարդալու՝ պարոնների՝ Գրիստակի Մարգարէանի նամակը, Լևոն Սարգսեանի նկատողությունը, «Մուրճի» աշխատակից Ա. Արեւեանի նամակը, «Տարադի» աշխատակից Պ. Մոնոնեանցի յօդուածը, և ուրիշ նամակներ՝ ստացված Նոր-Բայազետից, Բուստովից, Թիմիրեան-Եւրպայից, որպէս զի դոնէ այժմ հասկանալ, թէ ինչ կարծիք ունեն անբարոյականացած գրչալուծանքների և նրանց վարմունքների մասին մեր ինտելիգենցիայի ներկայացուցիչները, և նոյն իսկ «Մուրճի» և «Տարադի» աշխատակիցները, որոնց գրածները, դուք, պարոն, կոչված էք խմբագրելու...

Գալով ձեք յանդուգն մեղադրանքին, որով ինձ զրպարտում էք կեղծելու մէջ, պնդելով որ ես, բացի «Մշակի» մէջ տպագրված նամակներից, ուրիշ ոչինչ չեմ ստացել, ես կը դիմում ամենապարզապէս ձանադարձի։—Տրախրում եմ ձեզ, պ. Արաւիսան, այսօր, երեքշաբթի, ցերեկվայ ժամը 12-ին, մտնել «Մշակի» խմբագրատուն, ուր ձեզ ցոյց կը տրվեն բոլոր զօկուածները՝ հեռագիրները և նամակները, նոյն իսկ այն ընծան, որ մի անձանքի պարոն պատիւ արեց ուղարկել ինձ՝ իբր նշան իր համակրություն։ Տեսնելով այդ զօկուածները, դուք, ի հարկէ, պարտաւորված կը լինէք անմիջապէս հրապարակելով յետ վերցնել ձեր խօսքերը և ինձանից ներողություն խնդրել։ Բացի դրանից, որովհետև դուք թող տուիք, նախ քան ստուգել, մեղադրել ինձ կեղծելու մէջ, այդ պատճառով ես ինձ իրաւունք կը համարեմ, զօկուածները ձեզ ցոյց տալուց յետոյ, ձեր հասցէին արտասանել այն թէ՛ ծանր, բայց արդարացի խօսքը, որին արժանի են այն բոլոր մարդիկ, որոնք վրստահանում են, առանց որ և է հիմքի և պատճառի, լոկ անձական կրքից զրգոված, ուրիշին մեղադրել կեղծելու մէջ։

Ուրեմն, պ. Արաւիսան, այսօր ժամը 12-ին։

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՐՈՒՆԻ

Երէկ, մայիսի 6-ին, Նորին Կայսերական Մեծութիւն թագաւոր Կայսրի ծննդեան օրը, քաղաքը վաղ առաւօտից զարթալովից զբոսայիւրդով Միտին մայր եկեղեցում ուղղափառ հոգևորականությունը հանդիսաւոր պատարագ մատուցանե-

լու յետոյ, գոհացողական մաղթանք կատարեց, որին ներկայ էին զինւորական և քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչները։ Հայոց վանքի մայր եկեղեցում ևս հայ հոգևորականությունը հանդիսաւոր մաղթանք կատարեց։ Քաղաքիս ալազաւան եկեղեցիներում և աղօթաւաններում ևս գոհացողական մաղթանքներ կատարեցին։ Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

Շաբաթ, մայիսի 4-ին, Թիֆլիսում վախճանվեց, 55 տարեկան հասակում, Խոր Պետրովիչ Պրոցենկօ, որը կովկասադիտություն ասպարիզում ամենահին գործողներից մէկն էր։ Նա երկար տարիներ աշխատակցում էր «Кавказ» լրագրին և զլիաւորապէս պարապում էր կովկասի հաղիստութեամբ։ Ունի շատ գրուածներ կովկասի աղագրություն մասին. կազմել է նաև կովկասի աշխարհագրությունը։

Երկաթուղային երթևեկությունը Թիֆլիսից դէպի Բաթում կատարվում է անկանոն կերպով, չնորհիւ հեղեղների, որոնք մի քանի տեղեր երկաթուղու գիծը փչացրել են, իսկ Գրակալի կայարանի մօտ եղած կամուրջը վնասվել է, այնպէս որ գնացքը չէ անցնում այդտեղ և հանապարհորդները ոտով են անցնում մի յայտնի տարածություն։

Մայիսի 5-ին, կիրակի, Թիֆլիսի ս. Նուռէի իգական դպրոցը տուեց իր գոյություն յիսնամակը։ Նոյն օրը տեղի ունեցաւ և 1895 թվ տարեկան ակում։ Ինչպէս յայտնի է, այդ դպրոցը պահպանվում է ս. Նուռէ իգական Բարեգործական ընկերությունից։ Հանդէսի ժամանակ կարգաւորված հաշվեք երեսը, որ ուսումնարանը 40 հազար բուրլի հիմնական դրամագումար ունի։ 1895 թվին մուտք ունեցել է 97 հազար, իսկ ծախս — 92 1/2 հազար բուրլի։ Ապակեբուսիկների թիւը եղել է 496, որոնցից 300 հոգի գիշերօթիկ։

Ֆրանսիական լրագրիները հաղորդում են, որ երիտասարդ հայ նկարիչ Շաբանեանի մի պատկերը, այն է «Lever de lune sur l'océan Atlantique» (Լուսնի դուրս գալը Ատլանտեան օվկիանոսի վրա) ընդունվել է և հանդէս է դրված Պարիզի պատկերահանդէսում, ուր ընդգնանում են միայն աչքի ընկնող պատկերները։

Կիրակի, մայիսի 5-ին, ուսուցչ դրամատիկական խումբը ներկայացրեց առաջին անգամ Թիֆլիսի բեմի վրա՝ Իլյան Ա. Մումբասովի մի նոր սիւեան «Старый Закавказье» վերնագրով, որի սիւեանը, ինչպէս յայտարարված էր, վերցված է 50-ական թուականների կովկասեան կեանքից։ Պիեսան իսկապէս շատ քիչ կապ ունի կովկասեան կեանքի հետ, կամ նրա ունեցած կապը լոկ արտաքին և պատահական է, որովհետև սիւեայի մէջ դուրս բերված տիպերը վերցված են Պետերբուրգի կեանքից և զլխաւոր հերոսն ու հերոսուհին Պետերբուրգի արիստոկրատական շրջանիցն են, միայն գործողությունը մեծ մասամբ տեղի է ունենում կովկասում, որովհետև գործողները զինւորականներ են, որոնք եկել են կովկաս՝ պարսից դէմ մղվող պատերազմին մասնակցելու։ Ներկայացումը գրաւել էր ահաբեկ բաղմունքներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի 4-ին լոյս տեսաւ Անգլիայում «Կապուտ դրեք» նոր տետրը, որ վերաբերում է 1891—1893 թվերին տեղի ունեցած գրագրություններին։ Դոկումենտներից մէկը շատ բնորոշ է իբրև թիւրքական քաղաքականություն մի նմուշ։ Անգլիական զեհպան Կլեմֆորդ 1893 թվին լորդ Բոլդերիին ուղարկած իր մի հաղորդագրություն մէջ պատմում է, որ նա այդ թվի հոկտեմբերի 13-ին տեսնվել է սուլթանի հետ և շատ նպաստաւոր տպաւորություն է ստացել։ Խօսակցությունն նրվել եղել է բրիտանեանների կրած զրկանքը։ Գեսպանի առաջադրությունն սուլթանը պատասխանել է, որ նա անհաւատալի է համարում պաշտօնեաների այդպիսի զանցառությունները։ Գեսպանը, ինչպէս նոր մարդ

կ, Պոլսում, ընդունելով այդ բոլորը իբրև զուտ ձյւարտություն, յայտնում է սուլթանին, որ նրա բարոյական չը չար գործ դնելով՝ ժանդարմէրայի զլխաւոր են նշանակել Մարալանում մի նախկին աւաղակի, որով վնասվում է կանոնաւոր վարչական գործը։ Սուլթանը շտապում է հանգստացնել զեսպանին ասելով, որ ապագայում նա առանձին ուղարկություն կը դարձնի պաշտօնեաներ ընտրելու վրա։ Կլեմֆորդը հեռացել է շատ բաւարար տպաւորություն տակ և գրում է Բոլդերիին, որ նա յոյս ունի աջողություն ունենալու բրիտանեանների իրաւունքների պաշտպանութեան գործում, եթէ միշտ կը գտնի սուլթանին նոյն հրաշալի տրամադրութեան մէջ։ Բայց արդեւ գիտէր Կլեմֆորդը, որ նոյն ստեղծօրիկ խօսքերը, նոյն հանգստացնող, յուսադրող խոստումները, որ արտասանված էին նրա նախորդներին շատ անգամ, պէտք է արտասանվէին և յետագայ ժամանակներում, յաջորդ գեսպանին, երբ սա ներկայացրեց 30,000 կոտորած բրիտանեանների ցուցակը։

Կ. Պոլսից, անգլիական մի լրագրի թղթակից գրում է ապրիլի 30-ից, «չսա տեսա մի պաշտօնական զեկուցում, որ ստացվել է այստեղ և լոյս է սփռում միսիօնար Կնապային հեռացնելու գործի վրա։ Երևում է, որ հենց որ բայրամից յետոյ վալին հրաւիրում է իր մօտ մի քանի աչքի ընկնող հայեր և չորս թիւրք չէլիներ, վալին յայտնում է նրանց, որ երկրի բոլոր արիւնհեղություններ և խառնակություններ պատճառը ամբիւրիական միսիօնարներն են, յատկապէս Կնապայը, որը գրգռում էր հայերին և զրդում էր պատասխանելու։ Ուստի եթէ ներկայ եղողները ուղում են, որ հայերը և թիւրքերը այսուհետև սարկեն հանգիստ և եղբայրներ պէս, ամենաւաւ միջոցն է ուղարկել մի հեռագիր կատալաւրութեանը՝ պահանջելով անմիջապէս հեռացնել երկրից բոլոր միսիօնարներին։ Հայերը յայտնեցին, որ դա զրպարտություն է և մերժեցին վալիի առաջարկը։ Դրանից յետոյ վալին և չէլիները պահանջեցին, որ հայերը գնան և նորից մտածեն և պատասխանեն, համաձայն են արդեւ նրանք հեռագրել ամբիւրիական միսիօնարներին հեռացնելու մասին թէ ոչ։ Այդ առիթով հայ համայնքի նախագահը հրաւիրեց մի ժողով՝ պատասխանի մատլիս խորհրդակցելու համար։ Բոլորը միաբերան մերժեցին, բացի երկուսից»։

Իէյտէրի գործակալությունը հեռագրում է Կ. Պոլսից, «Մեծ պետությունների զեսպանները այս երկու օրս ժողով են կազմում քննելու Զէյթունի համար մահմետական գայմագամ նըշանակելու խնդիրը, ի նկատի ունենալով, որ նրանք դեռ պատասխան չեն ստացել այդ մասին Բ. Դոնից։ Մի և նոյն ժամանակ նրանք պէտք է քննեն հայերին բռնի կերպով իսլամացնելու խնդիրը։ Օսմանեան կառավարությունը կամենում է նշանակել Զէյթունի փոխահանգապետ մի հայ, Շաշեան անունով, որ առաջ ուսանող է եղել Պարիզում»։

«Daily News» լրագրի թղթակիցը հեռագրում է Կ. Պոլսից, ապրիլի 25-ից, «Գեսպանների երէկվայ խորհրդի մէջ երկար ժամանակ ըննվում էր հայերին բռնի կերպով իսլամացնելու խնդիրը։ Գեսպանները ընդունեցին, որ սըր Ֆիլիպ Կերրիի կատարել տուած ըննությունը միանգամայն հաստատում է բռնի իսլամացնելու իրողությունը, ուստի և խոստացան աջակցել անգլիական զեսպանին, որը մտադիր է դիտողություններ անել Բ. Դրան այդ առիթով և պնդել, որ միջոցներ ձեռք առնելն տէրրորի ենթարկված և վախից իսլամացող աղագրականությունը խաղաղացնելու համար»։

Լոնդոնից, մայիսի 4-ից, ուսուցչ հեռագրական գործակալություններ միջոցով ստացանք հետեւեալ հեռագիրը. «Համայնքների ժողովում Կլեմֆոն յայտնեց, թէ տեղեկություն է ստացված, որ Հալէպում մի որոշ թիւ հայ կալանաւորներին արձակեցին՝ անգլիական կառավարություն առաջադրություն պատճառով»։

